ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/10/21

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 19 մայիսի 2021թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Հայկուհի Հարությունյանի, Արամայիս Փաշինյանի, Նարեկ Համբարձումյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2021 թվականի մայիսի 19-ին քննության առնելով Ազգային ժողովի յոթերորդ գումարման պատգամավոր Հակոբ Սիմիդյանի նկատմամբ հայտարարագրման ենթակա տվյալները «Հայտարարատու պաշտոնատար անձի 2019 թվականի գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրում (այսուհետ՝ նաև 2019 թվականի տարեկան հայտարարագիր) չներկայացնելու փաստի առթիվ 2021 թվականի մարտի 1-ի N 15 որոշմամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ գործը՝

Պ Ա Ր Զ Ե Տ

I. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի նախապատմությունը

1.1 «Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպության լրագրող Սամսոն Մարտիրոսյանի դիմումի հիման վրա Հանձնաժողովը, իրականացնելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով վերապահված գործառույթները, Ազգային Ժողովի պատգամավոր Հակոբ Սիմիդյանի «Հայտարարատու պաշտոնատար անձի 2019 թվականի գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրերի տվյալների արժանահավատության և ամբողջականության ստուգում և վերլուծություն, որի արդյունքում պարզել է, որ Հակոբ Սիմիդյանը 2019 թվականի տարեկան հայտարարագրում չի ներկայացրել հայտարարագրման ենթակա տվյալներ.

1.2 Հանձնաժողովը՝ ՀՀ կենտրոնական բանկի և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2020 թվականի հունիսի 12-ի թիվ 91-Ն որոշման հավելված 2-ով հաստատված ՀՀ կենտրոնական բանկի և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի միջև տեղեկությունների փոխանցման ձևաչափին համապատասխան, ստացել է Հակոբ Սիմիդյանի բանկային հաշիվների մնացորդների վերաբերյալ տվյալներ, համաձայն որոնց

31

2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ վերջինիս բանկային հաշիվների մնացորդները կազմել են ընդհանուր 488,806.5 ՀՀ դրամ (435,698.30 + 53,108.20), իսկ 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,054,723.1 ՀՀ դրամ (1,001,567.20 + 53,155.90):

1.3 Հայտնաբերված խախտումների վերաբերյալ 2021 թվականի մարտի 1-ին Հակոբ Սիմիդյանի մասնակցությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 10/21 արձանագրությունը:

1.4 Հանձնաժողովի 2021 թվականի մարտի 1-ի N 15 որոշմամբ Ազգային ժողովի յոթերորդ գումարման պատգամավոր Հակոբ Սիմիդյանի նկատմամբ հայտարարագրման ենթակա տվյալները 2019 թվականի տարեկան հայտարարագրում չներկայացնելու փաստի առթիվ հարուցվել է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթ:

1.5 Հանձնաժողովը 2021 թվականի ապրիլի 14-ի թիվ Ե-01/192-2021 գրությամբ Հակոբ Սիմիդյանին առաջարկել է ներկայացնել հաշվետու ժամանակահատվածին վերաբերող, և ընկերությունների կողմից սպասարկվող իր բանկային հաշիվների քաղվածքները, որոնք վերջինս չի ներկայացրել Հանձնաժողովին:

1.6 2021 թվականի մայիսի 19-ին տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն, որի անցկացման տեղի և ժամանակի մասին Հակոբ Սիմիդյանը պատշաճ ծանուցվել է: Վերջինս Հանձնաժողովի պաշտոնական էլեկտրոնային փոստին ներկայացված հաղորդագրությամբ խնդրել է գործի քննությունն անցկացնել առանց իր մասնակցության:

II. Վարույթի մասնակցի բացատրությունը

Վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմման ընթացքում Հակոբ Սիմիդյանը բանավոր նշել է, որ նպատակ չի ունեցել թաքցնել իր դրամական միջոցները, այլ անզգուշության հետևանքով հայտարարագրում չի նշել իր հաշիվներում կուտակված միջոցների մասին: Նշել է նաև, որ այդ հաշիվներով նա ստացել է իր աշխատավարձը:

III. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ ՎԻՎ/10/21 գործում առկա նյութերը, կատարել հանգամանքների քննություն և հաստատված է համարում, որ Ազգային ժողովի յոթերորդ գումարման պատգամավոր Հակոբ Սիմիդյանի՝ 2020 թվականի մայիսի 30-ին ներկայացված «Հայտարարատու պաշտոնատար անձի 2019 թվականի գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրում՝ «Բ.6-Դրամական միջոցները» բաժնի «Բ.6.1.-Բանկային հաշիվների մնացորդներ ենթաբաժնում չեն ներկայացվել հայտարարագրման ենթակա տվյալներ, այն է՝ բանկային հաշիվներին առկա մնացորդները: Հակոբ Սիմիդյանի՝ ԲԲ և ԲԲ ընկերությունների կողմից սպասարկվող իր բանկային հաշիվների մնացորդները 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմել են ընդհանուր

488,806.5 ՀՀ դրամ (435,698.30 + 53,108.20), իսկ 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,054,723.1 ՀՀ դրամ (1,001,567.20 + 53,155.90):

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները

4.1 Հակոբ Սիմիդյանը իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 34-րդ հոդվածի համաձայն հանդիսանում է գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

4.2 Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող դրամական միջոցները (այդ թվում՝ բանկում ունեցած), իսկ նույն հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ գույքը հայտարարագրելիս նշվում են դրամական միջոցի դեպքում՝ դրամական միջոցի չափը, ծագման աղբյուրը, տեսակը, արժույթը: Դրանից բացի՝ նույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված է, որ դրամական միջոցի դեպքում տարեկան հայտարարագրում ներառվում են տվյալ տարվա հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ դրամական միջոցի չափը, ծագման աղբյուրը, տեսակը և արժույթը:

4.3 Օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ (--) Տարեկան հայտարարագիրը ներկայացվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից՝ տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածի համար:

4.4 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

4.5 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասին համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում **անզգուշությամբ** սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.6 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.7 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝

բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.8 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.9 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.10 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Հակոբ Սիմիդյանի կողմից թույլ է տրվել արաք, որով խախտվել է Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջը:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի N 04-Ն որոշմամբ սահմանվել են հայտարարագրի ներկայացման և հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու կարգը, հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջները:

Առաջնորդվելով նշված որոշմամբ սահմանված հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջներով՝ Հանձնաժողովը հայտարարագրերի լրացման կարգի խախտում է որակել այն դեպքերը, երբ հայտարարագրման ենթակա տվյալը լրացվել է սխալ ենթաբաժնում (2021 թվականի ապրիլի 9-ի թիվ ՎԻՎ/02/21 և 2021 թվականի մարտի 18-ի թիվ ՎԻՎ/01/21 որոշումներ):

Այն դեպքում, երբ հայտարարատուի ներկայացրած տվյալին վերաբերող որևէ տվյալ չի լրացվում համապատասխան դաշտում և լրացվում է այլ ենթաբաժնում՝ հայտարարտուն թույլ է տալիս հայտարարագրի լրացման կարգի պահանջների խախտման արարք, մինչդեռ Օրենքով պահանջվող հայտարարագրման ենթակա առանձին տվյալները չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքում՝ թույլ է տալիս ոչ ամբողջական կամ սխալ տվյալների ներկայացման արարք:

Օրենքով սահմանված վերոնշյալ իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ եկամուտների վերաբերյալ պահանջվող հայտարարագրման ենթակա տվյալները՝ դրանց ստացման աղբյուրների տարբեր լինելու դեպքում հայտարարագրում պետք է ներկայացվեն առանձին տվյալներով՝ ըստ աղբյուրների:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Հակոբ Սիմիդյանի կողմից 2019 թվականի տարեկան հայտարարագրում անզգուշությամբ ոչ ամբողջական տվյալների ներկայացված

լինելու առնչությամբ հաստատված խախտումը հանդիսանում է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված զանցանք:

Հանձնաժողովն արձանագրում է, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածը նպատակ է հետապնդում ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, թե արդյոք այդ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների բուն էության խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը: Վերոնշյալի համատեքստում Հանձնաժողովի կայացրած նախորդող որոշումների շրջանակում նվազ կարևորություն է որակել այն դեպքերը, երբ պաշտոնատար անձի կողմից չհայտարարագրած եկամուտը չի գերազանցել պաշտոնատար անձի պաշտոնեական դրույքաչափի համար սահմանված աշխատավարձի զուտ չափը: Բացի այդ, էական է գնահատվել նաև այն հանգամանքը, որ հայտարարատու պաշտոնատար անձի եկամուտը ստացվել է մեկ աղբյուրից: Մինչդեռ, սույն գործով հայտարարատու պաշտոնատար անձը չի հայտարարագրել պաշտոնատար անձի պաշտոնեական դրույքաչափի համար սահմանված աշխատավարձի զուտ չափը մի քանի անգամ գերազանցող գումար:

Հանձնաժողովի՝ 2021 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԻՎ/08/2021, 2021 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԻՎ/11/2021 որոշումներում նվազ նշանակության են որակվել այն դեպքերը, երբ պաշտոնատար անձի չհայտարարագրած եկամուտը չի գերազանցել նրա պաշտոնեական դրույքաչափի համար սահմանված աշխատավարձը: Էական է գնահատվել նաև այն, որ հայտարարատու պաշտոնատար անձի եկամուտը ստացվել է մեկ աղբյուրից: Մինչդեռ, սույն գործով հայտարարտուի կողմից չհայտարարագրված ընդհանուր գումարի չափը կազմում է 1,543, 529 ՀՀ դրամ (488,806.5 ՀՀ դրամ+1,054,723.1 ՀՀ դրամ), ինչը գերազանցում պաշտոնատար անձի պաշտոնեական դրույքաչափի համար սահմանված աշխատավարձի զուտ չափը:

Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործով խախտումը կատարվել է այնպիսի փաստական հանգամանքների համադրությամբ, որոնք նույնական չեն նախորդող վարչական ակտերում առկա փաստական հանգամանքների հետ:

Հանձնաժողովը բանկային հաշիվների մնացորդների վերաբերյալ տվյալները ստանում է ՀՀ կենտրոնական բանկի և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2020 թվականի հունիսի 12-ի թիվ 91-Ն որոշման Հավելված 2-ով հաստատված ՀՀ կենտրոնական

29

բանկի և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի միջև տեղեկությունների փոխանցման ձևաչափով, որում արտացոլված չի լինում գործարքի կողմի, ըստ այդմ՝ եկամուտի ստացման աղբյուրի վերաբերյալ տեղեկատվությունը:

Հանձնաժողովը հաշվի առնելով իր կողմից նախկինում կայացված որոշումները, ինչպես նաև վարույթի մասնակցի բացատրությունն առ այն, որ բանկային հաշիվներով վերջինս ստացել է իր աշխատավարձը՝ 2021 թվականի ապրիլի 14-ի թիվ Ե-01/192-2021 գրությամբ Հակոբ Սիմիդյանին առաջարկել է ներկայացնել հաշվետու ժամանակահատվածին վերաբերող, ԲԲ և ԲԲ ընկերությունների կողմից սպասարկվող իր բանկային հաշիվների քաղվածքները՝ պարզելու համար եկամուտի ստացման աղբյուրը՝ որպես վարույթի մասնակցի համար ենթադրյալ բարենպաստ հանգամանքի հիմնավորման տվյալներ: Մինչդեռ, վերջինս Հանձնաժողովին չի ներկայացրել գրությամբ նշված քաղվածքները:

Միաժամանակ, հաշվի առնելով այն, որ օրենսդրի կողմից «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված արարքի համար նախատեսված է վարչական պատասխանատվության ոչ հստակ սահմանաչափ, այն է՝ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, Հանձնաժողովն արձանագրում է, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով վարչական տույժ կիրառելիս հաշվի է առնվում ինչպես խախտման բնույթը, այնպես էլ պատասխանատվությունը ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքները:

Տվյալ պարագայում սույն գործով առկա չէ Օրենսգրքի 34-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող որևէ հանգամանք: Առկա է Օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք (հայտարարտուն ընդունել է հայտարարագրման ենթակա տվյալները հայտարարագրում չներկայացնելու արարքում իր անզգուշությունը, որի պատճառով հայտարարագրում չի նշել իր հաշիվներում առկա միջոցների մասին):

Հանձնաժողովն արձանագրում է նաև, որ վարույթի նյութերում առկա չէ վարույթի մասնակցի համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում դրանք հիմնավորող որևէ ապացույց, որով կբացառվեին խախտման դեպքի առկայությունը կամ կհիմնավորվեին խախտման նվազ նշանակություն ունենալը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Հայտարարատու պաշտոնատար անձի 2019 թվականի գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրում անզգուշությամբ ոչ ամբողջական տվյալներ ներկայացնելու համար Հակոբ Սիմիդյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200,000 ՀՀ դրամի չափով:

2. Տուգանքը պետք է վճարվի գանձապետական 900005001335 «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» հաշվեհամարին՝ վճարման անդորրագրի **«նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը**:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հակոբ Սիմիդյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Հակոբ Սիմիդյանին տրամադրել 7 օր «Հայտարարատու պաշտոնատար անձի 2019 թվականի գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրի համապատասխան բաժնում ուղղում կատարելու համար:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

28